

բանէ նորա եւ կանգնեալ կացի ի վերայ ոտից իմոց¹: 33 Եւ ասէ ցիս. «Վասն Է՞ր ես տրտում, եւ կամ ընդէ՞ր զբաղմունք շնանրութեան պղտորեն զմիտս քո եւ զյստակ խորհրդոց քոց: 34 Վասն զի անգիտական խորհրդովք յածեցուցեալ զմիտսդ՝ խռովէիր վասն չլինելոյ քեզ արու որդի. որ քաջածանաւթ էիր³ կամաց հզարին, որ գիտելութեամբ բաշխէ զհրաքանչիւր աւգուտ, եւ ոչ զլացութեամբ խափանեալ⁴ արգելու յումեքէ զարժանն: 35 Եւ արդ՝ գթալով ի քեզ Բարձրեալն վասն սիրելոյ զքեզ՝ կամեցաւ հեռացուցանել ի քէն զայդպիսի ընդունայն մտածութիւնս⁵, եւ մխիթարեաց զքեզ տեսլեամբդ այդուիկ⁶, որ ցուցաւ քեզ յայտնութիւն մեծ, ոչ միայն յառաջիկայս, այլ եւ շաքա ամենայն իրաց, որ լինելոց են⁸ մինչ ի վախճան աշխարհիս, ծանոյց քեզ եւ⁹ ամենայն հաւատացելոց ի բան նորա, որպէս ճշմարիտ նախնւոյն¹⁰ բում¹¹, առն Աստուծոյ սրբոյն Գրիգորի. իսկ քեզ մինչ ի կատարած աշխարհի որ ինչ միանգամ լինելոց է՝ եցոյց զամենայն: 36 Եւ արդ՝ լո՛ւր, եւ պատմեցից քեզ զմեկնութիւն մեծի յայտնութեանդ¹², որպէս ինձ հրամայեցաւ ի վերին զաւրութենէն¹³ ծանուցանել քեզ զամենայն. եւ դու ունկնդիր եղեալ բազում զգուշութեամբ՝ գրեա՛ ի տախտակս սրտի քո անմոռաց. զոր եւ ի մագաղաթի դրոշմեալ թողցես¹⁴ հաւատացեալ ժողովրդոց զգուշութիւն անսխալ¹⁵ մինչեւ¹⁶ ի վախճան աշխարհի¹⁷:

37 ¹⁸Մեկնութիւն տեսլեան սրբոյն Սահակայ ի հրեշտակէ Աստուծոյ. զոր եցոյց յայտնի ըստ իւրաքանչիւր զլիսոց եւ միոյ միոյ տանց, վասն կենաց մարդկան եւ կատարածի աշխարհի: 38 Տեսիլ սրբոյն Սահակայ:

39 «¹Զբանալ հաստատութեան երկնից զոր տեսեր եւ զտարածել լուսոյն սաստիկ ընդ ամենայն երեսս երկրի. քանզի ահա ի գալստենէ² կենարարի

1 ՁԱտ. չիք եւ կանգնեալ կացի ի վերայ ոտից իմոց

2 ՁԱտ. ձանձրութեան պղտորեն զխորհուրդս քո

3 Ձ. որ քաջծանօթ էր

4 ՁԱտ. չիք խափանեալ

5 ԲԳտ. դարձուցանել ի քէն զայդպիսի մտածութիւնս

6 Ձ. մխիթարեաց տեսլեամբդ *այդուիկ

7 ԲԳտ. առ ի յապա... ի վախճան ժամանակի

8 ՁԱտ. այլ եւ առ յապա ամենայն լինելոցն

9 Ձ. չիք քեզ եւ

10 Ատ. ճշմարիտ առ նախնոյն

11 Ձ. ճշմարիտ նախնոյն քո սրբոյն

12 ՁԱտ. չիք մեծի յայտնութեանդ

13 ՁԱտ. չիք ի վերին զօրութենէն

14 ՁԱտ. գրով թողցես

15 Ձ. անսխալ. ՏՏ. անսղալ

16 ՏՏ. մինչ

17 ԲԳտ. ի վախճան ժամանակի

18 ԲԳտ. չունին վերնագիր